

ԾԱՆՈԹԱՑԵՔ ՍԱՐԻԱՅԻ ՀԵՏ

# Հիսուսի հետևորդները Զիմբաբվեում

## Ինչպես է Սարիան հետևում Հիսուսին

Սարիան ունի առողջական որոշ խնդիրներ: Նա ընդունում է դեղամիջոցներ, որոնք օգնում են նրան: Նա երախտապարտ է իր կյանքի համար: «Փրկիչն օգնում է ինձ, ուստի, անհանգստանալու կարիք չկա»,- ասում է նա:

«Երբ մայրս հոգնում է, նրան պետք է, որ մեկը խաղա իմ փոքր քրոջ հետ»,- ասում է Սարիան: Նա օգնում է` երգելով նրա համար, գրկելով նրան և խաղալով նրա հետ:

Սարիան առաջինն է, ով նկատում է, երբ մայրը տխուր է, և նա միշտ ամուր գրկում է նրան: «Մարդկանց օգնելը ուրախացնում է ինձ»,- ասում է նա: «Հատկապես իմ ընտանիքին օգնելը»:





### Դուք նույնպես կարող եք հետևել Հիսուսին:

Նշեք որևէ բան, որ դուք արել եք` Հիսուսին հետևելու համար: Գրեք և պատմեք մեզ: Դարձերեսի շապիկին կարող եք տեսնել, թե ինչպես անել դա:




### Սարիայի մասին

**ՏԱՐԻՔԸ.** 7

**ԵՐԿԻՐԸ.** Արևելյան Մաշոնալենդ, Զիմբաբվե

**ԼԵԶՈՒՆԵՐ.** անգլերեն, շոնա

**ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.** 1) պարուհի դառնալ, 2) բժիշկ դառնալ:

**ՆԱԽԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.** խաղալ ընկերների հետ

**ԸՆՏԱՆԻՔԸ.** Սարիան, մայրը, հայրը, ավագ եղբայրը, ավագ քույրը, կրտսեր քույրը

### Ի՞նչ է սիրում Սարիան

**ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.** Երբ Հիսուս Քրիստոսն օրհնում է Նեփիացիների երեխաներին (տես 3 Նեփի 17)

**ՏՈՆԸ.** Զատիկ

**ՄՐԳԵՐԸ.** խնձոր և խաղող

**ԳՈՒՅՆԸ.** կարմիր

**ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԳԸ.** «Հավատո վեցերորդ հանգանակը» (*Մանկական երգարան*, 126)